

Բիզնես դրամաշնորհներ

Ընդհանուր տեղեկություն

Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (ՄՄԿ) իրականացնում է «խոցելի համայնքներում կենսապահովման և տնտեսական կենսունակության խթանում» ծրագիրը, որը ֆինանսավորվում է Կորեայի միջազգային համագործակցության գործակալության (ԿՄՅԳ) կողմից: Ծրագրի շրջանակներում հայտարարվում է հայտերի ընդունում Ձեռնարկությունների զարգացման հիմնադրամի (EDF) համար՝ աջակցելու փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) տնտեսական վերականգնմանը Հայաստանում: Նախատեսում է տրամադրել բիզնես-դրամաշնորհներ՝ մինչև 5 միլիոն դրամ արժողությամբ: Այն կտրամադրվի ըստ կարիքների գնահատման՝ աշխատատեղերի ստեղծման հնարավորության և բիզնես պլանի: Դրամաշնորհները կարող են օգտագործվել սարքավորումների, գործիքների, նյութերի, նոր արտադրական ուղղությունների, վերապատրաստման, աշխատավարձերի և այլ ֆիքսված ծախսերի համար: Հայտերը մանրամասն կդիտարկվեն կոմիտեի կողմից: Հաջորդ փուլ անցած դիմորդները մեկ ամսվա ընթացքում կտեղեկացվեն, որպեսզի ներկայացնեն համապարփակ բիզնես հայտ: Դիմորդները պետք է տրամադրեն դիմում-հայտում պահանջվող տեղեկատվությունը և բավարարեն ստորև նշված նվազագույն համապատասխանության չափանիշներին, այլապես նրանց դիմումը չի դիտարկվի:

Ու՞մ համար է նախատեսված

Դիմել կարող են միայն այն ՓՄՁ-ները, որոնք

- Գրանցված են և գործում են հետևյալ համայնքներից մեկում.
 - Տավուշի մարզ՝ Իջևան, Նոյեմբերյան
 - Լոռու մարզ՝ Ստեփանավան, Ալավերդի
 - Շիրակի մարզ՝ Արթիկ, Ախուրյան, Ամասիա
 - Գեղարքունիքի մարզ՝ Մարտունի, Վարդենիս, Ճամբարակ
- Նախատեսում են ընդլայնել իրենց բիզնեսը և երկարաժամկետ մնալ նշված համայնքներից մեկում, ինչպես նաև ստեղծել աշխատատեղեր համայնքի համար՝ ներառելով խոցելի խմբերի. փախստականների, հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց:

- Ունեն առնվազն 2 գրանցված աշխատող և նախատեսում են ավելացնել աշխատողների թիվը:
- Գործունեություն են ծավալում հետևյալ ոլորտներում՝ ծառայություն, արտադրություն և վերամշակում, առևտուր, գյուղատնտեսություն, շինարարություն:
- Պատրաստ են ներդնում կատարել 20-50 տոկոս չափով (կարող է լինել և՛ բնաիրային, և՛ դրամական):

Ընտրության չափանիշներ

Նախապատվությունը կտրվի այն ՓՄՁ-ներին, որոնք հետևյալ բաղադրիչներին առավելագույնս կհամապատասխանեն.

1. Առկա ռեսուրսներ/նախապայմաններ բիզնես նախագծի իրականացման համար;
2. Ստեղծվող աշխատատեղերի քանակ;
3. Դիմորդի որակավորումներ (աշխատանքային փորձ և հմտություններ)
4. Տնտեսական օգուտ տեղական համայնքի համար;
5. Կայունություն և շուկայի կենսունակություն;
6. Ռիսկեր;
7. Սոցիալական ազդեցություն՝ ներառյալ շրջակա միջավայրի վրա, խոցելի խմբերի ներգրավումը՝ ներառյալ փախստականներին, կանանց և հաշմանդամություն ունեցող անձանց:

Տե՛ս գնահատման ուղեցույցը Հավելված 1-ում:

Ձեռնարկությունների զարգացման հիմնադրամը (EDF) կիրականացնի դիմորդների ընտրության փուլային գործընթաց՝ կոֆտարկվի դիմորդի կողմից լրիվ դրույթով աշխատատեղերի ստեղծման ներուժը, ինչպես նաև բիզնեսի կայունությունը: Առաջին փուլում դիմորդները կլրացնեն և կներկայացնեն դիմում-հայտը: Հաջորդ փուլ անցած թեկնածուները կհրավիրվեն մշակելու ամբողջական բիզնես պլան դիմումի ձևով: Խորհուրդը կընտրի հաջողակ ՓՄՁ-ներին՝ այն չափանիշների հիման վրա, որոնք կիրառվել են բոլոր դիմում-հայտերի համար:

Ծրագրին դիմելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը

Լրացնել Դիմում-հայտը

- Լրացրե՛ք դիմում-հայտը՝ տրամադրելով բիզնեսի մասին անհրաժեշտ տեղեկատվությունը և նշելով պահանջվող գումարի չափը:
- Հայտի համար **անցե՛ք այս հղումով՝** <https://ee.kobo.iom.int/x/76Hfce2g>
- Հարցերի դեպքում կարող եք զանգահարել երկուշաբթից ուրբաթ ժամը 10:00-16:00 հետևյալ հեռախոսահամարով՝ 043 150024:

Դիմորդները պետք է դիմում-հայտի ներկայացման պահին հայտարարագրեն անձնական և բիզնես պարտքերը:

Ամբողջական դիմում

Ընտրվելուց հետո մասնակիցները պետք է լրացնեն ամբողջական դիմումը, որը ներառում է հետևյալ տեղեկատվությունը.

Անհրաժեշտ է ներկայացնել՝

- Համասեփականատերերի ամբողջական ցանկը և կոնտակտային տվյալները,
- Բաժնետերերի ամբողջական ցանկը և յուրաքանչյուրի բաժնեմասի չափը,
- Համաներդրման ֆինանսական հիմնավորման պատճենը,
- Աշխատավարձերի վերաբերյալ երաշխիքը,
- Մատակարարի վկայականը կամ համարժեք փաստաթուղթը

Ցանկալի է ներկայացնել՝

- Գրանցման ապացույցը,
- ՀՎՀՀ և տեղեկանք հարկային հաշիվների վերաբերյալ,
- Վերջին աուդիտն անցած ֆինանսական հաշվետվությունները,
- Ընկերության հանրային ծառայության համարանիշը,
- Հանրային ծառայության և անձնական եկամտահարկի վճարման ապացույցը, ներառյալ աշխատակիցների ցանկը և նրանց աշխատավարձերը՝ պետական հարկերի հետ միասին:

Մինչև 2 միլիոն դրամ դրամաշնորհների համար պետք է նաև ներկայացնել՝

- 2-3 էջ բիզնես պլան՝ ներառյալ նպատակները, մարկետինգային ուղիները և մրցակցությունը, ինչպես նաև աջակցության օգտագործման նպատակները:

2-ից 5 միլիոն դրամ դրամաշնորհների համար պետք է ներկայացնել նաև՝

- Բիզնես պլան, ներառյալ մարկետինգային ռազմավարությունը, մրցակցությունը և ֆինանսական պլանը առաջիկա 3 տարիների համար,
- Ռիսկերի կառավարման պլանը:

Պահանջվող գումարը պետք է հիմնավորվի հստակ հաշվարկներով և նպատակներով:

Դիմումներում և բիզնես պլաններում տրամադրված տեղեկատվությունը հաստատելու համար ՄՄԿ-ի աշխատակիցները կայցելեն բոլոր այն դիմորդներին, ովքեր հրավիրվել են երկրորդ փուլ՝ ներկայացնելու ամբողջական դիմումները: ՄՄԿ-ի աշխատակիցները և ՓՄՁ-ները կհանդիպեն քննարկելու բիզնեսի զարգացմանն ուղղված աջակցության տեսակները՝ հիմնված հարցաշարերի, այցելությունների, հարցազրույցների և դիմորդի նախընտրությունների վրա:

Ի՞նչպես դիմել

1. Կարդացե՛ք հայտարարության ամբողջական տեքստը:
2. **Բացե՛ք առցանց [հղումը](#), լրացրե՛ք դիմումն ամբողջությամբ ու դիմե՛ք մինչև հունիսի 8-ը, 2025 թ. :**
3. Արդյունքները կստանաք դիմումի ընդունման վերջնաժամկետից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում:
4. Հաջորդ փուլ անցնելու դեպքում ձեզ կտեղեկացվի հետագա ամբողջական դիմումը լրացնելու մասին:
Տեղեկացվելուց հետո կունենաք 30 օր ամբողջական հայտը լրացնելու համար: Ժամկետները չպահպանելու դեպքում դիմորդները կբացառվեն ընտրության հետագա գործընթացից:
5. ՄՄԿ-ի աշխատակիցները կայցելեն ընտրված դիմորդներին, հարցազրույցներ կիրականացնեն, ինչպես նաև կտրամադրվեն ընտրության գործընթացի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել երկուշաբթիից ուրբաթ ժամը 10:00-16:00 հետևյալ հեռախոսահամարով՝ 043 150024:

Բողոք-դիմումների համար տե՛ս նշված [հղումը](#):

Հավելված 1: Ընտրության չափանիշներ

Չափանիշ	Գնահատման ուղեցույց				
	0 միավոր	1 միավոր	2 միավոր	3 միավոր	4 միավոր
1. Առկա ռեսուրսներ/ նախադրյալներ	Դիմորդը չունի ոչինչ բիզնես նախագիծը սկսելու համար:	Ներկայացված նախադրյալներն ու ռեսուրսները բավարար չեն բիզնես նախագիծը սկսելու համար:	Առկա ռեսուրսները, ներառյալ դրամաշնորհը, բավարար չեն բիզնես նախագիծը սկսելու համար:	Ռեսուրսներն ու դրամաշնորհը բավարար են բիզնես նախագիծը սկսելու համար, բայց լրացուցիչ ծախսեր կպահանջվեն:	Ռեսուրսներն ու դրամաշնորհը բավարար են բիզնես նախագիծը սկսելու համար:
2. Աշխատատեղերի հնարավորություններ	Դիմորդը չունի աշխատակիցներ չի ընդունելու:	Դիմորդը ներգրավելու է միայն ընտանիքի անդամներին:	Դիմորդը ներգրավելու է այլ աշխատակիցների: Բիզնեսի չափը՝ 5-ից 9 աշխատակից:	Դիմորդը ներգրավելու է այլ աշխատակիցների: Բիզնեսի չափը՝ 10-ից 19 աշխատակից:	Դիմորդը ներգրավելու է ավելի քան 20 աշխատակից:
3. Դիմորդների որակավորումները	Դիմորդը չունի որևէ գիտելիք/փորձ/հմտություն տվյալ ոլորտում:	Դիմորդը ունի որոշ գիտելիք/փորձ/հմտություններ տվյալ ոլորտում	Դիմորդը ունի լավ գիտելիք/փորձ/նախագծի իրականացման հմտություններ (առանց կառավարման ֆունկցիայի):	Բացի նախագծի իրականացման գիտելիքներից/փորձից/հմտություններից, դիմորդը ունի բիզնեսի կառավարման փորձ:	Դիմորդը ունի կառավարման և արտադրանքի արժեզրոյալի այլ օղակներում ներգրավվածության փորձ:
4. 4. Օգուտ համայնքի համար	Տեղական համայնքի համար օգուտ չկա:	Համայնքի համար օգուտը նշանակալի չէ:	Համայնքը օգուտ ունի այնքանով, որ բնակիչները աշխատում են, և արտադրանքը/ծառայությունը բավարարում է տեղական շուկայի կարիքները:	Համայնքը օգուտ է ստանում, քանի որ տեղացիները աշխատանքի են անցնում, ներգրավված են առաջարկված նոր արտադրանքների/ծառայությունների արժեքային շղթայում:	Բացի նախորդ օգուտներից, բիզնեսը կարող է ուժեղացնել համայնքի ինքնությունը, առանձնանալ իր նորարարությամբ և բազմազանեցնել տեղական շուկան:
5. Կայունություն / շուկայի կենսունակություն	Բիզնեսը տեղական շուկայում պահանջարկ չունի:	Բիզնեսը ունի սահմանափակ պահանջարկ տեղական	Բիզնեսը ունի որոշակի պահանջարկ տեղական	Արտադրանքը ունի բարձր պահանջարկ Հայաստանում և կվաճառվի առանց լրացուցիչ ջանքերի նոր շուկայում:	Արտադրանքը ունի բարձր պահանջարկ Հայաստանում, ապացուցված

Չափանիշ	Գնահատման ուղեցույց				
	0 միավոր	1 միավոր	2 միավոր	3 միավոր	4 միավոր
		համայնքում և ավելի լայն տարածաշրջանում:	համայնքում և ունի հնարավորություններ ավելի լայն տարածաշրջանում և նույնիսկ դրանից դուրս:		պահանջարկ արտերկրում և կարող է հեշտությամբ արտահանվել:
6. Ռիսկեր	Ռիսկերը հայտում նշված չեն:	Չայտում նշված ռիսկերը անիրական են:	Չայտը նշում է ընդհանուր ռիսկեր, առանց բիզնեսի առանձնահատկությունները հաշվի առնելու:	Դիմորդը գիտակցում է ռիսկերը, հաշվի առնելով բիզնեսի առանձնահատկությունները, թեև ռիսկերի նվազեցման/կանխարգելման ուղիները չեն ներկայացված:	Դիմորդը գիտակցում է ռիսկերը, հաշվի առնելով բիզնեսի առանձնահատկությունները, հայտը նշում է ռիսկերի նվազեցման և կանխարգելման ուղիները:
7. Գեներային հավասարույն և ներառականություն (GESI)	Բիզնեսը չի հասկանում կամ չի օգտագործում GESI քաղաքականություններ:	Կա GESI հասկացությունների սահմանափակ, նվազագույն գիտակցություն:	Կա GESI-ի հիմնական գիտակցություն, բայց քաղաքականությունը հետևողականորեն չի կիրառվում:	Կա GESI սկզբունքների հստակ գիտակցություն, ակտիվորեն իրականացվում են պրակտիկաներ, ուսուցումներ և որոնք նպաստում են հավասարությանը և աշխատավայրում ներառականությանը:	Բիզնեսը լիովին հասկանում և ինտեգրում է GESI պրակտիկաները, շարունակաբար աշխատում է դրանք բարելավելու և խթանելու ուղղությամբ, ստեղծելով աջակցող միջավայր բոլոր աշխատակիցների համար:
8. Ծրջակա միջավայրի վրա ազդեցություն	Բիզնեսը վնաս կհասցնի շրջակա միջավայրին (հող, օդ, ջուր) նույնիսկ ռիսկերի կանխարգելման և	Բիզնեսը կարող է վնաս հասցնել շրջակա միջավայրին (հող, օդ, ջուր) և չունի ռիսկերի կանխարգելման և	Բիզնեսը կարող է վնաս հասցնել շրջակա միջավայրին (հող, օդ, ջուր), բայց կան միջոցներ ռիսկերը	Բիզնեսը կարող է վնաս հասցնել շրջակա միջավայրին (հող, օդ, ջուր), բայց կան միջոցներ կանխարգելելու և նվազեցնելու համար, որոնք	Բիզնեսը ոչ մի դեպքում չի վնասի շրջակա միջավայրին:

Չափանիշ	Գնահատման ուղեցույց				
	0 միավոր	1 միավոր	2 միավոր	3 միավոր	4 միավոր
	Նվազեցման համապատասխան միջոցների ձեռնարկման պարագայում:	Նվազեցման համապատասխան պլան:	կանխարգելելու և նվազեցնելու համար, որոնք կկիրառվեն կանոնավոր կերպով:	կկիրառվեն ժամանակ առ ժամանակ:	

Հավելված 2: Բողոքների ընթացակարգ

Բողոքների դեպքում խնդրում ենք դիմել այս հղումով՝ <https://forms.cloud.microsoft/e/GPWgMzqMdT>